ՌԱՋԱԲԱԼԻ ԱԼԼԱՀԻՅԱՐԱՀՄԱԴԻ
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ասպիրանտ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻՆ

Ժամանակակից աշխարհում, որտեղ տեխնոլոգիական վիթխարի փոփոխություններն ու զարգացումներն առաջ են բերում բազմաթիվ նոր իրադարձություններ ու խմորումներ, այն երկրներն են կարողանում առաջընթաց և կայուն զարգացում արձանագրել, որոնց հաջողվում է սոցիալական վստահության միջոցով ապահովել քաղաքացիների ներգրավվածությունը հասարակական կյանքի կարևոր հարցերում և տարբեր ոլորտներում:

Հանգուցային բառեր. սոցիոլոգիական մոտեցում, հասարակություն, փոխգործողություններ, սոցիալական վստահություն:

Սոցիալական վստահությունը հասարակական փոխգործողությունների ամենակարևոր տարրերից մեկն է և սոցիալական ներգրավվածության ու համագործակցության նախադրյալը, այդ իսկ պատճառով սոցիոլոգներն ու ոլորտի տեսաբանները մեծ ուշադրություն են դարձնում այս երևույթին: Սոցիալական վստահությունը՝ որպես սոցիալական կապիտալի ամենակարևոր բաղկացուցիչ, վաղուց ի վեր հետաքրքրել է դասական սոցիոլոգիայի տեսաբաններին, սակայն այն առավել լուրջ ուշադրության արժանացավ, հատկապես, վերջին տասնամյակներում՝ սոցիալական գործընթացների զարգացման և սոցիալական հասկացությունների կերպափոխման ու տեղաշարժերի արդյունքում:

Սոցիոլոգիայի բնագավառի մի շարք տեսաբաններ ու հետազոտողներ ուսումնասիրել են այս հիմնահարցը, ինչպես օրինակ՝ Էնտոնի Գիդդենսը, Պիոտր Շտոմպկան, Ֆերդինանտ Թյոնիսը, Կլաուս Օֆֆեն, Ջեյմս Քոուլմանը և Թալքոտ Պարսոնսը՝ առաջադրելով իրենց հայեցակարգերն ու մոտեցումները: Կարևոր են նաև Ռոբերտ Փաթնեմի, Մաքս Վեբերի, Էմիլ Դյուրկհեյմի, Ջորջ Զիմելի և Ֆրենսիս Ֆոկոյամայի մոտեցումներն ու կարծիքները:

Վերոնշյալ տեսաբանները կարևորել են սոցիալական վստահության երևույթը՝ ամեն մեկն առանձին տեսանկյունից մոտենալով հարցին: «Սոցիալական վստահությունը», ինչպես հասարակական ցանկացած երևույթ բարդ է և բազմակողմ, ուստի առաջադրված տեսակետներից ամեն մեկը փորձել է սահմանել «Սոցիալական վստահություն» հասկացության բովանդակային և իմաստային այս կամ այն կողմը, հետևաբար այդ տեսություններից ամեն մեկն առանձին վերցրած չունի բավարար համապարփակություն:

«Սոցիալական վստահություն» հասկացությունը դիտարկվում է տարբեր մակարդակների վրա՝ մանր (փոքր), միջին և խոշոր մասշտաբներ: Սոցիալական վստահությունը քննող հայեցակարգերն այն ուսումնասիրել են երեք մակարդակի վրա՝ փոքր, միջին և խոշոր:

Միջանձնային վստահությունը կամ ծանոթ մարդկանց հանդեպ վստահությունը համարվում է վստահության մանր կամ փոքր մակարդակը, որտեղ վերլուծվում են այս երևույթի անձնային և փոքրամասշտաբ գործոնները: Վստահության այս մակարդակն ուսումնասիրող հետազոտողները (Էրիկսոնը, Ջ. Քոուլմանը, Պիտեր Վերլավը և Ջոնսոնը) շեշտը դնում են ակտի և գործողության վրա: Նրանց համոզմամբ՝ վստահությունն ավելի շուտ անհատական հատկանիշ է և ազդեցություն է կրում գործողություններից ու վարքագծերից,

այսինքն ինչ-որ տեղ այս խմբի տեսաբանները հակված են մինիմալիստական մոտեցման, չեն անդրադառնում վստահության խոշորամասշտաբ գործոններին և հասարակության կառուցակարգին՝ ընդգծելով միայն անհատական, կենսաբանական, հոգեբանական և անձնային հատկանիշների դերը:

Ջ. Քոուլմանի կարծիքով՝ մարդիկ սոցիալական գործողության են դիմում իրենց կարիքները հոգալու և բավարարելու համար, որը տեղի է ունենում փոխանակումների, փոխադարձության, տուրևառության և գործարքների միջոցով: Վստահության վրա հիմնված յուրաքանչյուր գործողություն ներառում է երկու կողմ՝ վստահող և վստահվող: Ենթադրվում է, որ այս գործընթացի երկու ակտորն էլ ունեն իրենց սեփական նպատակները և ցանկանում են բավարարել իրենց սեփական կարիքները: Վստահողը պետք է որոշի, թե արդյոք մյուս կողմի հետ պիտի մտնել՞ գործարքի կամ փոխառնչության մեջ, թե՞ ոչ (այլ խոսքով՝ ընդունե՞լ վտանգը, թե՞ ոչ), իսկ վստահվող կողմն էլ պետք է որոշում կայացնի՝ իր հանդեպ եղած վստահությունը արդարացնելու և պահպանելու կամ էլ խախտելու և բեկանելու վերաբերյալ:

Վստահության միջին մակարդակի վրա է դրվում ընդհանուր և աբստրակտ վստահությունը, այսինքն բոլոր մարդկանց, միջնորդ խմբերի, կազմակերպությունների և փոքր հիմնարկների հանդեպ վստահությունը: Հասարակությունների և մարդկային խմբերի գոյատևումն ու հարատևումը պայմանավորված են նրա անդամների փոխհարաբերություններով ու գործողություններով: Ցանկացած խմբում մարդկային փոխադարձ կապերի մակարդակն ու խորքը արտացոլում են այդ խմբի անդամների միասնականության, միաբանության և կապվածության աստիճանը: Հումանիտար գիտությունների տեսաբանների կարծիքով՝ կարիքներն են որոշում մարդկային փոխհարաբերությունների և փոխգործողությունների մակարդակը: Որքան շատ ու ընդլայն լինեն մարդկանց կարիքները, այդքան ավելի ընդլայն ու ընդարձակ կլինեն մարդկանց փոխադարձ գործողությունները, գործարքներն ու կապերը, իսկ այդ կապերի խորության աստիճանը կախված է հասարակության անդամների վստահության չափից և հուզազգացական նկարագրից:

Վստահության միջին մակարդակը կարևոր ազդեցություն է թողնում հասարակական փոխհարաբերությունների ու գործողությունների վրա և ի զորու է կարգավորել հասարակական կապերը: Վստահության միջին մակարդակը կարող է փոխարինել սոցիալական վստահության երրորդ (այսինքն խոշոր) մակարդակին, երբ վերջինս տարբեր պատճառներով թույլ է և չկայացած տվյալ հասարակությունում:

Գիդդենսը վստահության հիմնախնդրի վերլուծման ժամանակ մերժելով ամեն տեսակի մինիմալիստական մոտեցումը վստահության հարցին՝ շեշտում է մանր ու խոշոր երևույթների փոխկապակցվածությունը, դրանք համալիր ու համադրված կերպով դիտարկելու անհրաժեշտությունը:

Անդրադառնալով աբստրակտ համակարգերի հանդեպ վստահությանը կամ ընդհանրացված վստահությանը՝ Գիդդենսը կարծիք է հայտնում, որ վստահության վրա հիմնված փոխհարաբերություններն առաջին հերթին խիստ անհրաժեշտ են հենց մոդերն հասարակության մեջ, քանի որ այստեղ ժամանակային ու տարածական միջակայքը չափազանց լայն է, ուստի կապերի ու գործարքների ծավալման և կարգավորման համար առավել կենսական է դառնում սոցիալական վստահության առկայությունը: Մոդերն հասարակությունում մեծ դեր ունեն համակարգերի և ինստիտուտների հանդեպ վստահությունը, այնպիսի գիտելիքի ու ինֆորմացիայի հանդեպ վստահությունը, որոնցից տվյալ մարդը անձամբ գրեթե բան չգի-

տի, այլ դրանց հավատում է միայն շնորհիվ ինստիտուտների հանդեպ ունեցած վստահության: Գիդդենսը նաև առաջ է քաշում «Անվստահություն» եզրույթը, որը կարող է տարածվել մարդկանց և վերացական համակարգերի վրա:

Իրանում վստահության այս տեսակն ունի վաղեմի անցյալ և մեծ նշանակություն, քանի որ խմբերն ու կառույցներն են իրենց գործունեությամբ բավարարում մարդկանց գլխավոր կարիքները, նրանց միջև հաստատում սոցիալական կապեր ու պարտավորություններ և ապահովում մտքի հանգստության ու գոհունակության զգացողությունը ժողովրդի մոտ: Մարդկանց գոհունակությունը և բավարարվածությունը տարբեր խմբերից, խավերից և արհմիություններից պատճառ են դառնում, որ նրանք գոհ լինեն համակարգից և պետությունից, ուստի և ստեղծվի ընդհանուր լեգիտիմություն:

Այն հասարակարգերում, որտեղ հասարակության և պետության միջև դեռ չեն ձևավորվել միջնորդ կապակցող կառույցներ ու ինստիտուտներ, իսկ ոչպետական կազմակերպություններն էլ չունեն անհրաժեշտ ուժ ու կարողություն, կուսակցություններն ու արհմիությունները միջնորդի և կապող օղակի դեր են խաղում ժողովրդի և պետության միջև: Ցավոք, այսօր Իրանում վստահության այս դրսևորումն ու տեսակը դեռևս անբավարար վիճակում է գտնվում:

Մի խումբ տեսաբաններ՝ Էմիլ Դյուրկհեյմը, Թալքոթ Պարսոնսը, Ռոնալդ Ինգլեհարթը, Ֆերդինանդ Թյոնիսը, Ֆրենսիս Ֆուկոյաման և այլոք, վստահությունը դիտարկում են խոշորամասշտաբ հարթության վրա՝ սոցիալական վստահությունը վերլուծելով հասարակարգի կառուցվածքային համատեքստում և կարևորելով այդ գործոնը: Հետազոտողների այս խումբը սոցիալական վստահության երևույթը քննում է լայնածավալ մակարդակում՝ շեշտը դնելով հասարակական կառուցակարգի վրա: Նրանք վստահությունը համարում են սոցիալական փոխգործողությունների առանձնահատկություններից մեկը կամ սոցիալական համակարգի հատկանիշ՝ այն բնութագրելով որպես հավաքական մի առանձնահատկություն:

Ֆրենսիս Ֆուկոյաման խոշորամասշտաբ հայեցակետով և տնտեսական մոտեցմամբ է նայում վստահության հիմնահարցին. «Նրա հայեցակարգի հիմքը և ուշադրության կիզակետը սոցիալական կապիտալի պահպանումն է՝ որպես ոչֆորմալ նորմերի ու արժեքների որոշակի ամբողջություն և համագործակցող անդամներից կազմված խումբ»: Ըստ Ֆուկոյամայի՝ այդ արժեքներն ու նորմերը ներառում են մի շարք բնութագրիչներ՝ ազնվություն, հավատարմություն, պարտավորվածության ու պատասխանատվության ցգացում և երկկողմ ու փոխադարձ հարաբերություններ:

Վստահության խոշորամասշտաբ դիտարկման տեսանկյունից՝ վստահության չափն ու մակարդակը հարաբերակցվում են հասարակության զարգացման աստիճանին: Ընդհանուր առմամբ, զարգացած հասարակարգերում սոցիալական վստահության մակարդակն ավելի բարձր է ոչ զարգացած հասարակարգերի համեմատությամբ: Ֆուկոյաման կարծում է. «Որևէ ազգի երջանկությունը և մրցակցության հավասար կարողունակությունը պայմանավորված են մշակութային համալիր մի առանձնահատկության առակայությամբ, և դա վստահության մակարդակն է հասարակության մեջ»:

Իրանցի հետազոտողներ Մ.Շարեփուրը և համահեղինակները (2007թ.) սոցիալական կապիտալն ուսումնասիրել են երկու կողմից՝ կառուցվածքային (քանակական) և իմացական-ճանաչողական (որակական): Քանակական կողմը վերաբերում է քաղաքացիների սոցիալական մասնակցության ու ակտիվության չափին, իսկ որակական կողմը՝ հասարակության մեջ սոցիալական վստահության մակարդակին և դրա տար-

բեր դրսևորումներին ու կառուցվածին:

Իրանցի հետազոտողներ Ս.Օջաղլուի և Մ. Զահեդիի կարծիքով (2005թ.)՝ սոցիալական վստահության վրա ազդող գործոնների ուսումնասիրման ամենից նպատակահարմար ձևն այն է, որ խուսափենք հարցը քննել լոկ մինիմալ կամ մաքսիմալ մակարդակների վրա, այլ պետք է հաշվի առնել սոցիալական վստահության թե՛ անձնային ու անհատական կողմը և թե՛ հասարակության կառուցվածքային գործոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գիդենս Է., Մոդերնիզմի հետևանքները, թարգմանիչ Սալասի Մ., «Մարքազ» հրատարակչություն, Թեհրան, 1998թ.:
2. Զեյնաբադի Մ., Հասարակության սոցիալական վստահության վերաբերյալ տեսություններ և հայեցակարգեր, «Փաժուհեշնամեհ» հանդես, 16-րդ համար, Համակարգի նպատակարմարության հաստատության ստրատեգիական հետազոտությունների կենտրոնի սոցիալ-մշակութային ուսումնասիրությունների խումբ, Թեհրան, 2008թ.:
3. Շարեփուր Մ. և ուրիշներ, Սոցիոլոգիական կապիտալի աստիճանակարգումը Իրանի նահանգների կենտրոններում, «Սոցիոլոգիական բարօրություն» հանդես, 7-րդ տարի, 26-րդ համար, Թեհրան, 2007թ.:
4. Քամալի Ա., Մշակույթի և քաղաքականության ոլորտների վստահության միջև համեմատական հետազոտություն, Թեհրանի պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետ, Սոցիոլոգիական մասնագիտությամբ ատենախոսություն, Թեհրան, 2004թ.:
5. Քոուլման Ջ., Սոցիոլոգիական տեսության հիմքերը, թարգմանիչ՝ Սաբուրի Մ., 1-ին հրատարակություն, Թեհրան, 1998թ.:
6. Օջաղլու Ս. և Զահեդի Մ., Սոցիալական վստահությունը և նրա վրա ազդող գործոնները Զանջան քաղաքի բնակիչների շրջանում, Իրանի հասարակագիտության հանդես, 6-րդ շրջան, 4-րդ համար, Թեհրան,2005թ.:
7. Ֆուկոյամա Ֆ., Համակարգի ավարտ. Սոցիալական կապիտալը և նրա պահպանումը, թարգմանիչ Թավասոլի Ղ., «Զամեհե իրանյան» հրատարակչություն, Թեհրան, 2000թ.:

РАЗЛИЧНЫЕ СОЦИОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ВОПРОСУ СОЦИАЛЬНОГО ДОВЕРИЯ

РАДЖАБАЛИ АЛЛАХЯРАХМАДИ

Факультет социологии ЕГУ, аспирант

Социальное доверие как важнейшая составная часть социального капитала издавна интересовала теоретиков классической социологии, однако на него стали обращать внимание, в частности, в последнее десятилетие - в результате развития социальных процессов и социальных понятий. В социологических исследованиях понятие «Социальное доверие» рассматривается на низких, средних и высоких уровнях, о которых говорится в статье.

VARIOUS SOCIOLOGICAL APPROACHES TO THE ISSUE OF SOCIAL TRUST

RAJABALI ALLAHYARAHMADI

Postgraduate Student of the Department of Sociology, Yerevan State University

Social trust, as an outstanding component of social capital, has interested classical theorists of sociology for a long time, but in the last decades, as a result of particular social processes and social concepts it became more and more significant. In sociological studies, the concept of “Social trust” is considered at low, medium and high levels, as referred in this article.